

California's Child Support Program (Երեխաների Օգնութեան Ծառայութիւնների Կալիֆորնիայի Բաժնի ծրագիր)՝ Տեղեկութեան աղբիւր ծնողների համար...



Ինչ կարող էք սպասել երբ աշխատում էք գործատիրոջ հետ



Կալիֆորնիայի Ընտանիքի Կող, յոդված 5230-ը պահանջում է որ իւրաքանչիւր երեխայի ապրուստադրամի դատական որոշում պարունակի աշխատավարձից պահելու հանձնարարական: Աշխատավարձից երեխայի ապրուստադրամի պահելու հանձնարարականը պահանջում է որ գործատերը ձեր աշխատավարձի չէբերից պակսեցնելու՝ երեխայի ապրուստադրամի ձեր պարտքը, ուղարկի այդ դրամը Պետական Վճարումների Գրասենեակ State Disbursement Unit (SDU):

■ **Գործատերը ինչպէս է տեղեկացվում**

Աշխատավարձից ապրուստադրամը պահելու հանձնարարական է տրվում դատարանի կամ Department of Child Support Services (DCSS) Երեխաների Օգնութեան Ծառայութիւնների կողմից: Երեխայի ապրուստադրամի գումարը սահմանվելուց յետոյ, աշխատավարձից պահում կատարելու հանձնարարութիւն է ուղարկվում գործատիրոջ՝ ցուցմունքներ տալով թէ ինչ գումար պիտի պակսեցվի ձեր աշխատավարձից եւ ուր պիտի ուղարկվի: Գործատերը պարտաւոր է երեխայի ապրուստադրամը ուղղակի պակսեցնել ձեր վարձից կամ աշխատավարձից:

Եթէ ձեր սեփական գործը ունէք, դեռեւս պարտաւոր էք երեխայի ապրուստադրամի գումարը պակսեցնել ձեր աշխատավարձից ըստ աշխատավարձից պահելու հանձնարարականի ցուցմունքների:

■ **Հանձնարարականի գործընթացը**

Սովորաբար, գործատերը **չի պահում** անելի քան 50 տոկոսը՝ ձեր եկամտահարկը պակսեցրած զուտ եկամուտից: Ձեր եկամուտը երեխայի ապրուստադրամը պակսեցնելու համար բաւարար չլինելու պարագայում, պակսեցումները կը կատարվեն հետեւեալ հերթականութեամբ՝

1. Ընթացիկ ամսվայ ձեր երեխայի, ընտանիքի եւ/կամ ամուսնական վճարումները
2. Ընթացիկ ամսվայ ձեր առողջապահական ապահովագները եւ/կամ այլ ընթացիկ բժշկական նպաստների վճարումները
3. Երեխայի ապրուստադրամի պարտքը
4. Որեւէ այլ գումար որ հանձնարարվել է բայց չի վճարվել

■ **Ինչպէս փոփոխել աշխատավարձից պահելու հանձնարարականը**

Եթէ համաձայն չէք որոշման հետ կամ ցանկանում էք փոփոխել դատարանի որոշած պահվելիք գումարը, կապվեցէք երեխաների օգնութեան ձեր տեղական գործակալութեան հետ: Չանգահարեք՝ 1(866) 901-3212/ TTY1(866) 399-4096, կամ **այցելէք հետեւեալ կայքէջը՝ <http://www.childsup-connect.ca.gov>**.

■ **Դադարեցնել/Կանխել Աշխատավարձից պահելու Հանձնարարականը**

Այն թվականից որ գործատերը ստանում է ձեր աշխատավարձից պահելու հանձնարարականը, աշխատավարձի պահումը շարունակվում է մինչեւ այն ժամանակ որ այլեւս չէք գործում կամ մինչեւ DCSS-ը գրում է գործատիրոջ դադարեցնել կամ կանխել պահումը:



"Երեխայի ապրուստադրամ... Ներդրում մեր երեխաների ապագայի համար"  
**CHILD SUPPORT DIRECTORS ASSOCIATION**  
(Երեխաների Օգնութեան Դիրեկտորների Միութիւն)  
[www.csda.org](http://www.csda.org)